

Այս դասի (դասի տեքստ + մտտիվացնող ներածական տեսանյութ + բառարան + ինքնաստուգիչ հարցեր + առաջադրանք) յուրացման համար հարկավոր է մինչև 360 րոպե/6 ժամ:

ԴԱՍ 10

ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԴԻՄԱԳՐԱՎՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄԿՉՔՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀՌԵՏՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ԼԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱԼՅՈՒԹ
(կարող եք գտնել հեռաուսուցման փաթեթի կրիչում)

Սույն դասընթացի վերջին դասը նվիրված է՝

- ապակառուցողական հնարքների դիմագրավմանը,
- ապակառուցողական հնարքների չեզոքացման մեթոդաբանական սկզբունքների ուսումնասիրությանը,
- հոետորի անձնական որակների վերլուծությանը:

Ցուցումներ



Մինչև 15 րոպե

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:



Մինչև 120 րոպե

10.1. ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԴԻՄԱԳՐԱՎՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՍԿՉՔՈՒՆՔՆԵՐԸ

Հաղորդակցման արդյունավետության բարձրացման ճանապարհին կարևոր պայման է կառուցողական տրամաբանական ու արտատրամաբանական սկզբունքների, պերճախոսական հնարների իմացությունը և դրանց կիրառումը: Երկրորդ պայմանը ապակառուցողական հնարքների մասին պատկերացում ունենալն է: Երրորդը, թերևս, ապակառուցողական հնարքների դիմագրավման կարողություններն ու հմտություններն են:

Բոլոր դեպքերի համար միասնական և ճշգիրտ այգորիթմ առաջարկելը շատ դժվար է, եթե չասենք՝ անհնար: Անգամ գործնական հաղորդակցման ու հոետորական արվեստի այնպիսի վարպետ, ինչպիսին Դեյվ Քարնեգին է, մի առիթով նշում է խորհուրդների սահմանափակ հնարավորությունների մասին. «Որքան ավելի եմ դասավանդում հրապարակային ելույթներ ունենալու արվեստը, այնքան ավելի հստակ եմ հասկանում ու պարզորոշ գիտակցում, որ հնարավոր չէ տալ համընդհանուր կանոններ, որոնք ճիշտ լինեն կյանքի բոլոր դեպքերում: Շատ բան կախված է քննարկման առարկայից, գործողության տեղից ու ժամանակից և իրենից՝ մարդուց: Ինչպես Սուրբ Պողոսն է ասել՝ ամեն մեկը պետք է իրագործի իր փրկությունը» [Carnegie D. How to Develop Self-Confidence and Influence People by Public Speaking. N.Y., 1956, էջ 158]:

Դ. Քարնեգիի դիտարկումն ընդունելով հանդերձ, հարկ է նկատել, որ խորհուրդներ տալու դժվարությունը դեռևս չի նշանակում դրանց անհնարիություն կամ ավելորդություն: Նախորդ դասի ընթացքում

քննարկեցինք առանձին հնարքների («[հոգու ընթերցանություն](#)», գրպարտություն, «[շողորթ փաստարկ](#)», [թվացյալ առավելությունների շահարկում](#)) դիմագրավման որոշակի տարբերակներ կոնկրետ դեպքերի համար: Իհարկե, անիմաստ է փորձել մոդելավորել հաղորդակցման տարբեր գործընթացներում, մասնավորապես վիճարբանությունների ընթացքում ստեղծվող բոլոր իրավիճակներն ու հնարավոր անթույլատրելի հնարքները և տալ դրանց չեզոքացման ճշգրիտ բանաձևերը: Բայց դրանց չեզոքացման ընդհանուր *մեթոդաբանական սկզբունքներ* ու մոտեցումներ մշակելը հնարավոր է և անհրաժեշտ:

Ազնիվ, բայց անփորձ բանավիճողը, որն արդեն ծանոթ է սովետական հնարքների բազմությանը, դիմակայելու նպատակով կարող է առաջարկել ունկնդիրների ներկայությամբ բացահայտել ապակառուցողական հնարքի էությունը, մերկացնել դրա հեղինակի իրական նկրտումները: Բազմափորձ, բայց անազնիվ վիճողն էլ կարող է առաջարկել սովետական հնարքին պատասխանել համարժեք հնարքով: Իսկ ինչպե՞ս պետք է վարվի ազնիվ և փորձառու բանավիճողը:

Անթույլատրելի հնարքը լիարժեք չեզոքացնելու և բացահայտելու համար անհրաժեշտ է իրականացնել *չորս քայլ*.

- [Նկատել ու հասկանալ հնարքը](#)
- [Չտրվել հնարքի ազդեցությանը](#)
- [Ցույց տալ դրա հիմքում ընկած՝ հաղորդակցման արդյունավետությունը երաշխավորող նորմերի խախտումները](#)
 - [Բացահայտել ու ապացուցել այդ խախտումների դիտավորությունը՝ դրանով իսկ հնարքը շրջելով հակառակորդի դեմ:](#)

Միշտ չէ, սակայն, և ոչ բոլոր հնարքների դեպքում

Վերհիշեք նշված հնարքները:

Հատուկ ուշադրություն դարձրեք այս քայլերին:

Է, որ հնարավոր է իրագործել բոլոր չորս քայլերը: Դիմագրավման առանձնահատկությունների և «բացահայտելիության աստիճանի» տեսանկյունից անբույլատրելի հնարքները նպատակահարմար է բաժանել *երեք խմբի*:

Առաջին խումբը կկազմեն այն հնարքները, որոնց դեպքում հնարավոր է իրականացնել վերը նշված բոլոր չորս քայլերը: Այդպիսիք են *ուժի փաստարկը, սպաննայիքները, գրպարտությունը, թեզիսի խափանարար նենգափոխումը, վիրավորական արտահայտությունները, պիտակավորումը, հակառակորդի փաստարկներին չսպացուցված գնահատականներ տալը*: Նախորդ դասի ընթացքում քննարկեցինք գրպարտության չեզոքացման մեխանիզմը. պետք չէ փորձել արդարանալ և կամ հերքել գրպարտության դրույթները, այլ պետք է պահանջել սպացույցներ ու անհերքելի հիմնավորումներ, որոնց բացակայության պարագայում դժվար չէ ցույց տալ հակառակորդի նենգամտությունն ու գրպարտչական կեցվածքը: Նույն եղանակով կարելի է հերքել «պիտակավորումներն» ու կասեցնել ընդդիմախոսին ու նրա դրույթներին չսպացուցված գնահատականներ տալու գործելակերպը:

Մանատիպ հնարքները չեզոքացնելու ընթացակարգը հետևյալ կերպ է նկարագրում ռուս հետազոտող Ա.Վ. Ստեշովը: Վերլուծելով հակառակորդի փաստարկման ընթացքը՝ պետք է ընդգծել ոչ միայն այնտեղ հայտնաբերված կեղծ դրույթներն ու անտրամաբանական հետևությունները, այլև այդ նենգափոխումների իրական շարժառիթները, դրանց միտումնավորությունը: Ապա՝ հարձակման սլաքներն ուղղել ընդդիմախոսի դեմ՝ վարկաբեկիչ փաստերով ցույց տալով նրա անբարեկիրթ լինելը, խարխլելով նրա հեղինակությունը: Ցանկալի է նաև, երբ այդ ամենն արվում է հումորով, սատիրայով: Տեղին են լարվածությունը լիցքաթափող անեկդոտները, սուր արտահայտությո-

յունները [տե՛ս Стешов А.В., Как победить в споре. О культуре полемики. Ленинград, 1991, էջ 142-143]:

Անթույլատրելի հնարքների *երկրորդ խումբը* կազմում են այն տեխնոլոգիաները, որոնց դեպքում հնարավոր է բացահայտել ընդդիմախոսի դատողություններում տեղ գտած սխալներն ու անճշտությունները, սակայն գրեթե անհնար է, և խորհուրդ չի տրվում փորձել ապացուցել դրանց միտումնավոր լինելու հանգամանքը: Այդ հնարքների թվին են պատկանում *տրամաբանական սխալների, կանոնավոր մտածողության ընդհանուր և մասնավոր օրենքների խախտումների վրա հիմնված սովետությունները*, ինչպիսիք են *թեզիսի մասնակի և ամբողջական նենգափոխումները, կեղծ և չհիմնավորված փաստարկները, թվացյալ ապացուցումները*: Պատրաստված մարդու համար դժվար չէ հայտնաբերել և ի ցույց դնել ընդդիմախոսի կշռադատություններում եղած տրամաբանական սխալները: **Սակայն խորհուրդ չի տրվում բանավեճ սկսել դրանց միտումնավորության վերաբերյալ, եթե, իհարկե, սխալի ակնհայտ դառնալուց հետո ընդդիմախոսն ընդունում է այն և չի շարունակում համառել:**

Օրինակ, թեզիսի մասնակի կամ ամբողջական նենգափոխման դեպքում հարկավոր է ընդդիմախոսին և լսարանին ներկայացնել տրամաբանական կանոնավորության հիմնարար սկզբունքներից մեկի՝ որոշակիության պահանջի խախտման հետևանքով թույլ տրված սխալը և արդյունքում՝ բանավեճի մի նոր, երկրորդական կամ տվյալ համատեքստում անկարևոր հարցի շուրջ տեղափոխման փաստը: Պետք է հիշեցնել ընդդիմախոսին բանավեճի սկզբնական թեզիսի, հիմնական թեմայի ու նպատակի մասին, ճշգրտել հակաթեզիսը և քննարկումը վերադարձնել նախկին հունը:

Ընդդիմախոսի կշռադատություններում կեղծ փաստարկներ հայտնաբերելիս հարկավոր է ակնառու

Հատուկ ուշադրություն դարձրեք խորհրդին:

կերպով, անհերքելի օրինակների ու փաստերի միջոցով ցույց տալ դրանց անհամապատասխանությունն իրականությանը, նախորդ դասերի ընթացքում մեր կողմից քննարկված տրամաբանական եղանակներով հերքել դրանց ճշմարտությունը և անցնել այդ շինծու փաստարկների վրա կառուցված կշռադատությունների հերքմանը: Նույն ձևով պետք է վարվել նաև կեղծ կամ թվացյալ ապացուցումների դեպքում:

Սակայն, ինչպես արդեն նշեցինք, նպատակահարմար չէ պնդել այդ սխալների միտումնավորությունը: Քանզի, եթե վիճողը, ընդդիմախոսին մեղադրելով անազնիվ կեցվածքի մեջ, չկարողացավ ապացուցել նենգամտության և միտումնավորության առկայությունը, ապա այդ քայլը կարող է որակվել որպես մերկախոս, չապացուցված մեղադրանք («հոգու ընթերցանություն») և ունկնդիրների մոտ ինքը կարող է անազնիվ վիճողի տպավորություն թողնել: Վեճը կարող է ընդունել լարված և սուր անձնական բնույթ: Բացի այդ, բացառված չէ, որ «մերկացնող» կողմն էլ սխալվի, նրան թվա, թե ընդդիմախոսը սխալը կատարել է միտումնավոր, սակայն իրականում այն լինի չգիտակցված: Այնպես որ ավելի ճիշտ կլինի բավարարվել հակառակորդի դատողություններում սխալի բացահայտմամբ՝ չքննարկելով՝ միտումնավոր է այն կատարված, թե՞ ակամա: Չէ՞ որ սխալի բացահայտումն արդեն միանգամայն բավարար է հակառակորդի կշռադատությունները հերքելու համար:

Ապակառուցողական հնարքների *երրորդ խումբը* կազմում են այն նուրբ և գլխավորապես հոգեբանական ազդեցությանը միտված տեխնոլոգիաները, որոնց չեզոքացման համար չեն պահանջվում, անգամ հակացուցված են «հանգամանալից մերկացումները»: Այդպիսիք են նախորդ դասի ընթացքում մեր կողմից դիտարկված «շողորորթ փաստարկները», մտքի ոչ բացահայտ ձևերի օգնությամբ անցանկալի դրույթի

Դաս 3-ից օգտվելով վերհիշեք, թե ինչ է մտքի ոչ բացահայտ ձևը:

մատուցման մարտավարությունը, ինչպես նաև ներ-
շնչման հոգեբանական հնարքներն ու ընդդիմախոսի
ուշադրությունը շեղելուն, նրան կեղծ հետքի վրա
հանելուն ուղղված գործողությունները: Այդպիսի
հնարքները չեզոքացնելու ամենալավ եղանակն ու
ամենախելացի հակամիջոցը դրանք ճանաչելն ու
դրանց ազդեցության տակ չընկնելն է, խայծի կողքով
անտարբեր անցնելը: Որոշ հեղինակներ նման դեպ-
քերում թույլատրելի են համարում հակառակորդի
դիտողությունների ու հարցերի արհամարհումը [տե՛ս
Стешов А.В. Как победить в споре. О культуре по-
лемики, էջ 136]: Այդպիսի խարդավանքներին չտրվելն
արդեն մեծապես պայմանավորում է դրանց անհաջո-
ղությունը:

Ի վերջո, պետք է հաշվի առնել նաև լսարանի
գործոնը: Բանն այն է, որ անգամ բացահայտելիության
առաջին և երկրորդ խմբում ընդգրկված հնարքների
պարագայում ոչ միշտ են կիրառելի ու երաշխավորված
դրանց չեզոքացման նպատակով գիտական մեկնաբա-
նություններն ու բացատրական աշխատանքը: Եթե
վեճը տեղի է ունենում անպատրաստ, բարդ ու երկա-
րաշունչ դատողություններ չսիրող ու չընկալող
ունկնդիրների առաջ, ապա հիշյալ մեկնաբանությու-
նները կարող են դժվարացնել վիճաբանությունը, թու-
լացնել տպավորությունը: Իսկ որպեսզի ունկնդիր-
ներին հասու լինի, և նրանք կարողանան հասկանալ
հնարքի էությունը, հաճախ անհրաժեշտ է ընդլայնել
նրանց մտահորիզոնը, լրացուցիչ գիտելիքներ հաղոր-
դել տրամաբանությունից, բարոյագիտությունից, հո-
գեբանությունից, փաստարկման տեսությունից, ինչը
գրեթե անհնարին է: Նախ անագնիվ հակառակորդն
ամեն կերպ կձգտի թույլ չտալ զարգացնել երկա-
րաշունչ բացատրություններ: Իսկ եթե նա այդպիսի
քայլեր չձեռնարկի էլ, ապա շատ ունկնդիրներ կարող
են չհասկանալ առաջարկվող մեկնաբանությունները,
դրանք կթվան անհետաքրքիր ու ծանձրալի: Կարճա-

միտ մարդը գրուցակցի դատողություններում իր համար դժվարամարսն ու անհասկանալին սովորաբար հակված է վերագրել նրա մտածողության արատավորությանը:

Այնպես որ, ապակառուցողական հնարքների չեզոքացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելիս, առավել ևս, երբ դա նախատեսվում է անել հրապարակայնորեն մերկացնելու, ունկնդիրների ներկայությամբ դրանք ըստ էության մեկնաբանելու ճանապարհով, պետք է հաշվի առնել, թե ովքեր են ունկնդիրները, ինչպիսին է նրանց պատրաստվածության ու մտավոր զարգացածության մակարդակը, և ըստ այդմ էլ՝ ամեն կոնկրետ դեպքում պարզել, թե որքանով է նպատակահարմար, որքանով կարող է արդյունավետ լինել չեզոքացման այս կամ այն ձևը տվյալ պարագայում:

10.2. ՀՌԵՏՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

Հաջողակ հոետորի *ստաջին* և ամենակարևոր որակը տրամաբանությունն է՝ կուռ և ստեղծագործական մտածողությունը:

Երկրորդը՝ մասնագիտական գիտելիքներն են, բազմիմացությունը, ապա նաև՝ տվյալ խնդրի խոր իմացությունը:

Երրորդը՝ խոսքի մշակույթն է՝ պարզ, հստակ, հասկանալի, նաև տպավորիչ խոսելու կարողությունը:

Չորրորդը՝ խոսքի գեղեցկությունն է, գրավչությունը՝ պերճախոսական հնարքներին տիրապետելն ու դրանք ճիշտ կիրառելու կարողությունը:

Հինգերորդը՝ թույլատրելի մարտավարական հնարներին տիրապետելն է, ինչպես նաև անթույլատրելի հնարքների իմացությունը և դրանց արդյունա-

Փորձեք ինքնուրույն ավելացնել այլ որակներ ևս:

վետ չեզոքացնելու կարողությունը:

Վեցերորդը՝ նվիրվածությունն է իր գործին, գրուցակիցների ու լսարանի նկատմամբ հարգանքը, զսպվածությունն ու հանդուրժողականությունն ընդդիմախոսի անձի նկատմամբ:

Այս որակների մասին բավականաչափ խոսվել է նախորդ դասերի ընթացքում: Ուստի առանձնացնենք նշված որակները լրացնող ու առավել ամբողջացնող այլ հմտություններ ևս, որոնք կարելի է դիտարկել որպես հոետորի գուտ անձնական բնութագրի տարրեր:

Դրանցից առաջինը *հոետորի կերպարն է*, որը կազմող բաղադրիչներ են *ա) արտաքին տեսքը, բ) լսարանի վրա ներգործող ոգևորությունն ու ինքնավստահությունը, գ) կեցվածքը էլույթի ժամանակ, ժեստերն ու միմիկան:*

Հոետորի *արտաքին տեսքը* չպետք է իր վրա սևեռի ունկնդիրների ուշադրությունը՝ շեղելով այն էլույթի բովանդակությունից: Հագուստը պետք է լինի համեստ, միաժամանակ՝ կոկիկ և գործնական: Պետք չէ դատարան ներկայանալ զգեստապահարանի ամենաթանկ կոստյումով, որով կարելի է ներկայանալ տոնական արարողությունների, բարձրաշխարհիկ ընդունելությունների կամ նորաձևության ցուցադրության: Խորհուրդ չի տրվում կրել աչքի զարնող թանկարժեք զարդեր ու պճնանքի այլ առարկաներ, ներկայանալ այնպիսի արտառոց սանրվածքով, որն ավելի սազական կլիներ երիտասարդական երեկույթի համար: Ներկաների զննության առարկան պետք է լինեն ոչ թե էլույթ ունեցողի արտաքինը, այլ նրա փաստարկները: Հոետորի՝ զարմանք, նախանձ և նպանատիպ զգացմունքներ առաջացնող արտաքինը լսարանում կարող է առաջացնել օտարվածություն, քամահրանք և անբար-

յացականությունն թերահավատությունն՝ նրա մասնագիտական գիտելիքների ու հմտությունների նկատմամբ: Հագուստը պետք է հարմար լինի կրողի համար, որևէ կերպ չկաշկանդի նրա շարժումները և «չհիշեցնի» իր մասին:

Պակաս կարևոր չէ նաև ելույթ ունեցողի *ներքին տրամադրվածությունն ու հոգեվիճակը*, որը ևս կարող է դրսևորվել նրա խոսքում և որոշակիորեն ազդել ներկաների վրա: Հատկապես սկսնակ հոետորները կարևոր ելույթից առաջ ունենում են անհարմարավետության, անգամ՝ վախի ու տագնապի զգացումներ, քրտնում են ձեռքի ավերն ու ճակատը, ոտքերում դող, իսկ բերանում չորություն է զգացվում, կարող է դողալ ու կտրվել ձայնը, արգելակվել մտածողությունը: Այդպիսի վիճակը հաղթահարելու համար նախ, իհարկե, անհրաժեշտ է ելույթից առաջ լավ պատրաստվել, այն կարգալ մտերիմների համար, անել նշումներ թղթի վրա, որոնք մտքի արգելակման պարագայում կհուշեն ասելիքի հաջորդականությունը: Կարևոր է նաև ելույթից առաջ հանգստանալը, ֆիզիկական և հոգևոր ուժերը վերականգնելը: Վերջապես, օգտակար են հոգեբանական ինքնավարժանքն ու ներշնչումը: Պետք է կարողանալ տրամադրվել ու նախօրոք մտովի պատկերացնել սեփական ելույթի հաջողությունը, մտքում կրկնել. «Ես լավ եմ պատրաստվել: Ես կարող եմ գրավել ներկաներին և տպավորություն գործել իմ գրագետ ու վստահ ելույթով: Ես ոգևորված եմ ինձ հատկացված դերակատարությամբ: Դատարանին ու գործի մասնակիցներին իմ փաստարկները ներկայացնելու եմ համոզիչ ու տպավորիչ: Չեմ երկնչում ընդդիմախոսությունից, ընդհակառակը՝ սպասում եմ դրան և պատրաստ եմ արժանի կերպով դիմագրավել ու հակադարձել այն» և այլն [նմանատիպ ինքնավարժանքների մասին տե՛ս նաև Петров 2004: 354]:

Ելույթի ժամանակ հոետորն իր *կեցվածքով* պետք



Է թողնի ինքնավստահ և իրավիճակին տիրապետող մարդու տպավորություն: Պետք է նստել ձիգ կեցվածքով, ձեռքերը չթաքցնել սեղանի տակ կամ ամբիոնի ետևում. դրանք պետք է լինեն սեղանի կամ ամբիոնի վրա: Ընդ որում, պետք չէ մի ձեռքի դաստակն առնել մյուս ձեռքի ասի մեջ կամ մատների միջոցով միմյանց հյուսել ավերք: Ձեռքերը պետք է լինեն տեսանելի ու ազատ՝ «սֆինքսի կամ առյուծի դիրքով», մասնակցեն ելույթի բովանդակությունից բխող ժեստիկուլյացիային: Գլուխը պետք է պահել հպարտ, պարանոցը՝ ձիգ, բայց ոչ լարված ու կաշկանդված: Գլուխը պետք է լինի կրծքավանդակից փոքր-ինչ առաջ եկած, ինչպես գրուցակցին ինչ-որ բան բացատրելիս: Չի կարելի կծկվելով գլուխը թաքցնել ուսերի արանքում: Եթե ելույթը բեմի վրա է, և չկա տեղադրված ամբիոն, ապա պետք է զբաղեցնել բեմի կենտրոնը: Լսարանում ելույթ ունենալիս խորհուրդ չի տրվում մնալ մեկ կետում, պետք է տեղաշարժվել, լցնել տարածությունը, բայց ոչ՝ օրորվել տեղում կամ «վազվզել» [տե՛ս Петров 2004: 356]:

Մարմնի ամեն մի շարժ, որի միջոցով ընդգծվում է արտասանվող խոսքերի նշանակությունը, հոետորիկայում կոչվում է **ժեստ (շարժում)**: **Միմիկան (դիմախառ)** դեմքի մկանների շարժումն է և աչքերի արտահայտությունը, որոնց միջոցով գրուցակցին ու լսարանին են փոխանցվում ելույթ ունեցողի տրամադրությունները, վերաբերմունքը խնդրո (խոսքի) առարկայի նկատմամբ: Ժեստերը և միմիկան պետք է համապատասխանեն այն զգացմունքներին ու ապրումներին, որոնք ունի հոետորը և որպիսիք նա ձգտում է առաջ բերել ունկնդիրների մոտ:

Կան ժեստերի մի քանի տեսակներ. *մոդիֆիկացնող, պատկերավորող* կամ *փոխանցող, ցուցադրող, կարգավորող* և այլն:

Մոդիֆիկացնող (լատիներեն modus - չափ, եղա-

նակ և facio - անել բառերից) **Ժեստերն** ուժեղացնում են արտասանած բառերի էմոցիոնալ ներգործությունը: Օրինակ՝ ձեռքերի շարժումը ներքևից վերև արտահայտում է դրական հույզեր և բարձր տրամադրություն: Բացասական հույզերի դեպքում բնութագրական է վերևից ներքև շարժումը: Անհույս վիճակի, հոգեբանական փակուղու զգացումներն արտահայտվում են երկու ձեռքերը դեպի ներքև ընկնող շարժմամբ՝ «թևաթափ լինելով»:

Հոետորների կողմից հաճախ օգտագործվող ժեստերի մյուս տեսակը *պատկերավորող կամ փոխանցող ժեստերն* են: Դրանք օգտագործվում են ասելիքի որոշ հատվածներ ընդգծելու կամ միտքը բացատրելու դեպքում: Օրինակ՝ իր խոսքի որևէ կարևոր հատվածի շարադրանքից առաջ հոետորը նախապատրաստում է ունկնդրին, որ հիմա ինքը կշարադրի հարցի էությունը կամ ամենագլխավորը: Այդ խոսքերը կարող են ուղեկցվել պտղունցի սկզբունքով իրար միացված և դեպի վեր ուղղված մատների կամ վեր բարձրացրած ցուցամատի ժեստով:

Խոսելով երևույթների բազմության մասին կամ եզրահանգում կատարելիս հոետորը կարող է ձեռքով անել «շրջան նկարելու» ժեստ: «Փռող-ծածկող» ձեռքի հորիզոնական շարժումը գործածվում է երևույթների համասեռությունը, նույնությունն ընդգծելու համար:

Դատական ճառասացները հաճախ օգտվում են *ցույց տվող (ցուցադրող) ժեստերից*: Դրանցից ամենաշատը կիրառվում է սեփական անձը, զրուցակցին կամ երրորդ կողմին մատնացույց անող ժեստը: Առաջին դեպքում բացված, ապա աստիճանաբար սեղմվող մատներով ձեռքը շարժվում է դեպի խոսողի կուրծքը: Մյուս դեպքերում բաց ձեռքն ուղղվում է դեպի խոսքի հասցեատերը կամ լսարանը: Ցույց տվող ժեստերը հաճախակի են գործածվում: Սակայն հենց այստեղ է,

որ հոետորը պետք է առավել ուշադիր ու նրբանկատ լինի: Անզգույշ կիրառելու դեպքում դրանք կարող են վիրավորել ժեստի հասցեատիրոջը: Մարդուն մատուցույց տալը շատ դեպքերում համարվում է ոչ պատշաճ և վիրավորական: Դրա համար խորհուրդ է տրվում ցույց տվող ժեստերը դատարանում գործածել ոչ թե կտրուկ ու արագ, այլ փոքր-ինչ դանդաղեցված և ընդլայնված շարժումներով: Այդ դեպքում հոետորը ավելի վստահ կարող է լինել, որ ոչ մեկին ակամա չի նեղացրել [տե՛ս Петров 2004: 362]:

Կարգավորող ժեստերից առավել կիրառական են ձեռքը ծավված կամ կիսածավված արմունկով բարձրացնելը, որն ուշադրություն գրավելու կամ ձայն խնդրելու իմաստ ունի (ինչպես դպրոցական պարապմունքի ժամանակ), ձեռքի ափով դեպի գրուցակիցը կամ լսարանն ընթացող դիմահար շարժում կատարելը, որը լռելու կամ հանդարտվելու հորդոր է բովանդակում:

Առավել հաճախ կիրառվողներից են *նկարագրական ժեստերը*, որոնց նպատակն առարկայի ձևը, չափը կամ այլ հատկություններ նկարագրելն է:

Ելույթ ունեցողի կերպարն ամբողջացնող գործոններից է **միմիկան (դիմախաղը)**, որը կարելի է մշակել հայելու առաջ՝ տարբեր հույզեր (տխրություն, թախիծ, ուրախություն, հրճվանք, զարմանք, վրդովմունք) արտահայտող դատողությունների արտասանելով: Անհրաժեշտ է ջանալ, որ դեմքի արտահայտությունը յուրաքանչյուր դեպքում համարժեք կերպով ու առավել խոսուն արտացոլի տվյալ զգացմունքը: Պետք է հետևել դեմքի արտահայտությանը նաև այն դեպքերում, երբ հոետորը պարզապես, առանց հույզերի դիմում է իր ունկնդիրներին: Դեմքի արտահայտությունն այդ ժամանակ պետք է լինի հանգիստ ու բարյացակամ:

Հոետորը պետք է հասնի նրան, որ ժեստերը լինեն ազատ ու բնական, լրիվ ու ամբողջական (ոչ թե կիսատ), որ դրանք մի փոքր նախորդեն ունկնդիրների մոտ զգացմունքներ առաջ բերող իր խոսքերին:

Ժեստերն ու միմիկան հղկելու լավ եղանակ է առաջին մի քանի ելույթների տեսագրումը, ապա դիտումը և խնդրո առարկա դրվագների վերլուծությունը փորձառու մասնագետների հետ:

Պետք է հիշել, սակայն, որ հոետորը դերասան չէ, և կարիք չկա որևէ մեկին կրկնօրինակել: Ժեստերն ու դիմախաղը պետք է համապատասխանեն հոետորի անհատական կերպարին: *Փոխել որևէ բան պետք չէ: Պետք է միայն շտկել դրանք:*

Հաջորդը հոետորի ձայնի հնչեղությունը, խոսքի տեմպն ու շեշտադրումներն են:

Հնչեղ ձայնի հիմքը հոետորի կողմից իր շնչառությունը կառավարելու կարողությունն է: Որպեսզի ձայնը հնչեղ լինի, պետք է թոքերն օդով լցնել: Որպես կանոն, ելույթը սկսելիս հոետորը խոր շունչ է քաշում: Հետևաբար, առաջին խոսքերն ունենում են բարձր հնչեղություն: Բայց մեկ շնչով կարելի է արտասանել միայն սահմանափակ թվով բառեր: Ուստի պետք է հաճախակի շնչել, բայց ոչ շատ խորը: Պետք է թոքերում մշտապես ունենալ օդի բավարար պաշար, որպեսզի ապահովեք արտասանվող բառերի անհրաժեշտ հնչեղությունը: Դրա համար հարկավոր են *շնչառական դադարներ*: Խորհուրդ է տրվում շունչ առնել յուրաքանչյուր 10-15 բառից հետո: Նախընտրելի է, որ շնչառական դադարները համընկնեն տրամաբանական ու հոգեբանական դադարների հետ:

Մասնագետներն առաջարկում են նաև թոքերն ու

ձայնը մարզելու տարրեր վարժություններ:

Վարժություն 1. Թոքերը հնարավորինս արագ լցրեք օդով և արտաբերեք «ա՛»՝ դանդաղորեն ու հավասարաչափ արտամղելով օդը տասը վայրկյանի ընթացքում: Կրկնեք այդ վարժությունը օրը մեկ կամ երկու անգամ՝ 5-ական ընդմիջումով՝ ավելացնելով արտաբերման ժամանակը մինչև 20-30 վայրկյան: Դա թույլ կտա զարգացնել շունչը խնայելու և թոքերում պահուստային օդ թողնելու կարողություն:

Վարժություն 2. Արտաբերեք «ա՛», ինչպես նախորդ վարժության ժամանակ, բայց այս անգամ փոփոխեք հնչեղությունը: Սկսեք թույլից և աստիճանաբար բարձրացրեք ձայնը, որ այն լսելի լինի 30 մետրից, ապա նորից նվազեցրեք հնչեղությունը մինչև ձայնի մարելը: Կրկնեք վարժությունն օրական մի քանի ընդմիջումով, մինչև ձայնը ձեռք բերի անհրաժեշտ կայունություն և հնչեղություն: Այս վարժությունը թույլ է տալիս նաև ընդլայնել ձայնի դիապազոնը:

Խոսքի տեմպը ներառում է երեք բաղադրիչ. ա) արագությունը՝ միավոր ժամանակահատվածում (օրինակ՝ մեկ ընդմիջում) արտասանված բառերի քանակը, բ) առանձին բառերն արտասանելու տևողությունը, գ) դադարները և դրանց տևողությունը:

Որքան մեծ է կշռադատությունների բովանդակային ծանրաբեռնվածությունը, այնքան ավելի դանդաղ պետք է դրանք մատուցել: Ուստի, խոսքի առավել կարևոր մասերը, որոնք պարունակում են, օրինակ, սահմանում, ապացուցում կամ հերքում, պետք է մատուցել համեմատաբար դանդաղ՝ կենտրոնացնելով դրանց վրա լսարանի ուշադրությունը: Պակաս կարևոր և բովանդակային առումով պակաս ծանրաբեռնված հատվածները պետք է արտասանել ավելի արագ, այլապես դրանք կձանձրացնեն ներկաներին:

Սովորաբար հոետորը պետք է պահպանի խոսքի

միջին արագություն՝ արտասանելով բոլոր 100-120 բառ: Խոսքի առավելագույն արագությունը կարող է լինել բոլոր 150 բառ: Ավելի արագ խոսքը ոչ ամբողջությամբ է ընկալվում ունկնդիրների կողմից¹²:

Առանձին բառերի արտասանության տևողությունը կարող է պայմանավորված լինել դրանց հետ կապված ապրումներով ու հույզերով, ինչպես նաև դրանք շեշտադրելու և ընդգծելու ցանկությամբ: *Տրամաբանական շեշտը* բանավոր խոսքում արտահայտվում է ձայնի հնչերանգի ավելացմամբ, բառը վանկերով արտասանելով կամ էլ տվյալ մտքից առաջ ու հետո դադար տալով: Այդ դադարը ընդգծում է տվյալ մտքի կարևորությունը և թույլ տալիս ունկնդիրներին ավելի պարզորոշ ու հստակ ըմբռնել այն: Գրավոր խոսքում տրամաբանական շեշտն արտահայտվում է տվյալ բառը կամ միտքն ընդգծելով:

Տրամաբանական շեշտի միջոցով կարելի է տարբեր իմաստներ հաղորդել նույն դատողությանը: Օրինակ՝ «Կիրակոսն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն» դատողությունը կարող է չորս տարբեր իմաստներ արտահայտել:

- 1) «Կիրակոսը (և ոչ թե ուրիշ մեկը) ունի իրավաբանական բարձրագույն կրթություն»:
- 2) «Կիրակոսն ունի բարձրագույն (և ոչ թե միջնակարգ) իրավաբանական կրթություն»:
- 3) «Կիրակոսն ունի բարձրագույն *իրավաբանական* (ոչ թե մեկ այլ մասնագիտական) կրթություն»:
- 4) «Կիրակոսն *ունի* (պետք չէ կասկածել) բարձրագույն իրավաբանական կրթություն»:

Հոգեբանական դադարները պայմանավորված են ելույթ ունեցողի հուզական ապրումներով կամ էլ խոսքին լրացուցիչ հուզականություն հաղորդելու



¹² Չափացանց արագ խոսքի պատճառները կարող են լինել արագ մտածողությունն ու անփորձությունը, հուզվածությունը, նյութի բովանդակության նկատմամբ անտարբերությունը:
• ՓԱՍՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՌԵՏՈՐԻԿԱ • ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՉԵՌՆԱՐԿ

ցանկությամբ:

Խոսքի և արտասանության՝ վերը դիտարկված որակների հղկման ու զարգացման առումով ևս արժեքավոր մեթոդ է *ելույթի տեսագրումը և տեսագրության հանգամանայից վերլուծությունը*:

Հոետորի հաջողությունն էապես պայմանավորված է *յալ հիշողությամբ*: Նա պետք է կարողանա մտապահել գործի մանրամասները, դատական գործընթացի մասնակիցների անունները, տեղը, որտեղ կատարվել են իրադարձությունները, ժամանակը, գործի մյուս հանգամանքները, ներկայացված փաստաթղթերն ու դրանց բովանդակությունը: Այդ ամենի համար նախ անհրաժեշտ է *մեխանիկական հիշողություն*՝ տեղեկատվությունը մտապահելու և անհրաժեշտության դեպքում այն վերարտադրելու ու օգտագործելու կարողություն: Այս հատկությունն անհրաժեշտ է, սակայն՝ ոչ բավարար: Երբ հոետորը ծանոթանում է գործին, իրադարձություններն ու դրանց մեկնաբանությունները սկսում են միմյանց հետ կապակցվել ոչ թե մեխանիկորեն, այլ որոշակի տրամաբանական կապերի միջոցով: Առաջ է գալիս ու զարգանում *ասոցիատիվ հիշողություն*:

Մեխանիկական հիշողությունը զարգացնել սկզբունքորեն գրեթե անհնարին է, սակայն, որպեսզի այն չթուլանա, պետք է մշտապես մարզել միտքն ու չհոգնեցնել ուղեղը: Բարելավել ու զարգացնել կարելի է ասոցիատիվ հիշողությունը:

Գործի նյութերն ուսումնասիրելիս հոետորը պետք է վեր հանի փաստերի միջև եղած կապերն ու առնչությունները, դասակարգի փաստերն ու փաստարկները՝ ըստ կողմ ու դեմ նշանակության, ըստ կարևորության, ըստ ժամանակագրական հաջորդականության: Անհրաժեշտ է գրառումներ անել, ելույթը

պատրաստելիս գրել հիմնական դրույթները և սխեմատիկորեն ցույց տալ դրանց միջև եղած կապերն ու հաջորդականությունը: Ումանք կողմնակից են էլույթն ամբողջությամբ գրելուն և այն կարդալուն: Մյուսները՝ ամբողջությամբ գրելուն, բայց առանց կարդալու խոսելուն: Կան նաև հանպատրաստից ճառի կողմնակիցներ: *Լավագույն տարբերակը, թերևս, էլույթը գրելն է, սպա հիմնական դրույթների դուրսբերումն ու «կոնսպեկտի» (սեղմագիր-հուշագրի) պատրաստումը:*

Ելույթի ամբողջական տեքստի առկայությունը կարող է անընդհատ գրավել հոետորի ուշադրությունը և, ի վերջո, վերջինս կարող է կառչել ու այլևս չկտրվել թղթերից: Ելույթի տեքստի բացակայության պարագայում հոետորը կարող է ականա բաց թողնել որոշ կարևոր դրվագներ ու փաստարկներ, կարող է արգելակվել նրա մտածողությունը: Իսկ հիմնական դրույթները բովանդակող **մենամոնիկ կոնսպեկտի** դեպքում հոետորը կարող է խոսել հետևողական, առանց անցանկալի ընդհատումների՝ միաժամանակ չկառչելով իր թղթերին: Իհարկե, *գործնականում հնարավոր է նշված բոլոր ձևերի համադրությունը, անգամ մեկ գործի շրջանակներում:*

Եվ այսպես, այս դասի ընթացքում Դուք ծանոթացաք՝

- անթույլատրելի հնարքները դիմագրավելու ու դրանք չեզոքացնելու մեթոդաբանական սկզբունքներին,
- հոետորի անձնական որակներին,
- նրա կերպարի, արտաքին տեսքի, ժեստերի ու դիմախաղի առանձնահատկություններին,
- խոսքի արտասանության որակներին:

Դրանց իմացությունը և այդ գիտելիքների ու որակների զարգացմանն ուղղված ձեր հետագա ջանքերը սեփական հոետորական կարողությունների զարգացման կարևոր գրավականներն են: